19
ՄԱՅԻՍԻ
2022

Luys Lnyu®

ՀԱՅԿԱԿԱՆ «6 ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ». ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՔ, ԹԵ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ «6 ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ». ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀԻ՞ՄՔ, ԹԵ՞ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ 5 ԿԵՏԵՐԸ 1

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ 6 ԿԵՏԵՐԸ 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 13-ին Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանը հրապարակել է Հայաստանի ներկայացրած 6 կետերը՝ ի պատասխան մինչ այդ Ադրբեջանի կողմից ներկայացված 5 կետերի, որոնց հիման վրա առաջարկվում է Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսել[1]: «Լույս» հիմնադրամը անդրադարձել է Ադրբեջանի և Հայաստանի հրապարակած կետերին՝ փորձելով վերլուծել դրանց բովանդակությունը:

Արձանագրել ենք, որ Ադրբեջանի և Հայաստանի ներկայացրած «առաջարկ-սկզբունքները» խիստ անհամարժեք են՝ ինչպես բովանդակության, այնպես էլ դրանց միջազգային ընկալման ու միջնորդների արձագանքի տեսանկյունից: Միաժամանակ ներկայացրել ենք որոշ առաջարկներ, որոնք ճիշտ ձևակերպելու և պատշաճ ներկայացնելու դեպքում հայկական կողմը կարող էր (կարող է) բանակցային գործընթացի մեկնարկին մոտենալ ավելի հիմնավոր, միջազգային հանրության համար ընկալելի և միջազգային իրավունքի տեսանկյունից անխոցելի դիրքերից:

1. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ 5 ԿԵՏԵՐԸ

Դեռևս 2022թ. մարտին, նախ ադրբեջանական ԶԼՄ-ները, այնուհետև Ադրբեջանի արտգործնախարարությունը հրապարակեցին իրենց 5 սկզբունքները, որոնք ուղարկվել էին հայկական կողմին և որոնց հիման վրա առաջարկվում էր կարգավորել հայ-ադրբեջանական հարաբերությունները[2]: Նախ անդրադառնանք Ադրբեջանի ներկայացրած 5 կետերին.

1. Ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, պետական սահմանների անձեռնմխելիության և միմյանց քաղաքական անկախության փոխադարձ ճանաչում:

2. Պետությունների՝ միմյանց նկատմամբ տարածքային պահանջների բացակայության և ապագայում նման պահանջներ չներկայացնելու իրավական պարտավորության փոխադարձ հաստատում:

---

[1] Հարցազրույց Էդմոն Մարուքյանի հետ, Հանրային Հեռուստաընկերություն, 13.05.2022թ, https://www.youtube.com/watch?v=2JNCQDBHlnk&ab_channel=%D4%BC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80 (Այցելվել է 17.05.2022թ.):

[2] У Баку на это 5 принципов: Азербайджан огласил условия для нормализации с Арменией, 14.03.2022թ, https://eadaily.com/ru/news/2022/03/14/u-baku-na-eto-5-principov-azerbaydzhan-oglasil-usloviya-dlya-normalizacii-s-armeniey (Այցելվել է 17.05.2022թ.):

3. Զերծ մնալ միջպետական հարաբերություններում միմյանց անվտանգությանը սպառնալուց, քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության դեմ սպառնալիքներ ու ուժ կիրառելուց և ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին անհամապատասխան քայլերից:

4. Հայ-ադրբեջանական սահմանի սահմանագծում և սահմանազատում, դիվանագիտական հարաբերությունների հաստատում:

5. Տրանսպորտային հաղորդակցությունների բացում, այլ համապատասխան հաղորդակցությունների հաստատում և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցություն:

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանի ներկայացրած առաջարկ-սկզբունքները դիվանագիտական տեսանկյունից կազմված են բավական գրագետ, առավելագույնս բխում են միջազգային իրավունքից, շատ հստակ են և որոշակի: Ավելին, այդ կետերում արտացոլված են Ադրբեջանի արտաքին քաղաքական օրակարգի բոլոր առանցքային հարցերը՝ շատ որոշակի և առանց երկիմաստության: Օրինակ, այդ կետերում 2 անգամ նշվում է տարածքային ամբողջականության սկզբունքը, մեկ անգամ՝ տարածքային պահանջների բացակայության սկզբունքը: Ավելին, Ադրբեջանը խոսում է նույնիսկ ուժի և դրա սպառնալիքի չկիրառման սկզբունքից՝ սակայն այն ուղղակիորեն կապելով տարածքային ամբողջականության սկզբունքի հետ:

Ադրբեջանն իր ձևակերպումները կազմել է այնպես, որ մի կողմից՝ Հայաստանի կողմից դրանց ընդունումը՝ որպես բանակցությունների հիմք, Բաքվին հնարավորություն է տալիս ի սկզբանե գործընթացը տանել սեփական օրակարգով, մյուս կողմից՝ բավական բարդ իրավիճակում է դնում հայկական կողմին, քանի որ դրանց մերժումը կարող է մեկնաբանվել որպես միջազգային իրավունքի որոշ սկզբունքներից հրաժարում: Հետևաբար, շատ կարևոր էր, որ հայկական կողմը հանդես գար համարժեք, նույնքան հիմնավոր և բանակցային գործընթացի մեկնարկում հավասարակշռության վերականգնմանը միտված բանաձևերով: Ցավոք, հայկական կողմի ներկայացրած «առաջարկ-սկզբունքները» ոչ միայն չեն նպաստում այդ հավասարակշռության վերականգնմանը, այլ ավելի են խճճում մեր բանակցային դիրքերը:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ 6 ԿԵՏԵՐԸ

Նախ հարկ է նշել, որ հայկական կողմը Ադրբեջանին ուղղված պատասխանը և սեփական 6 կետերը հանրայնացրեց ադրբեջանական սկզբունքների հրապարակումից միայն 2 ամիս անց, երբ արդեն իսկ իր համաձայնությունն էր տվել

Բաքվի առաջարկներին և նույնիսկ դրանց հիման վրա մեկնարկել բանակցային գործընթացը: Միաժամանակ, նույնիսկ այս դեպքում գործ ունենք ոչ թե այդ 6 կետերի բառացի և հստակ շարադրման ու պաշտոնական հրապարակման, այլ ՁԼՄ-ների միջոցով դրանց ռուսերենից հայերեն թարգմանության հետ՝ համեմված այն ներկայացնող հատուկ հանձնարարություններով դեսպանի մեկնաբանություններով: Ավելին, նույնիսկ ՁԼՄ-ներից մեկի հարցմանն ի պատասխան՝ ԱԳՆ-ն հրաժարվել է տրամադրել ադրբեջանական կողմին հայկական կողմի արձագանքի փաստաթուղթը՝ միայն հղում անելով Մարուքյանի հարցազրույցին[3]: Հետևաբար, ներկայացնենք Մարուքյանի հրապարակած այսպես կոչված «6 կետերի» «ոչ պաշտոնական թարգմանությունը ռուսերենից», ներառյալ՝ նրա որոշ մեկնաբանությունները.

«Հայկական կողմի արձագանքը ադրբեջանական կողմի փոխանցած Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների հաստատման հիմնական սկզբունքների վերաբերյալ» .

1. «Նշված է առաջին կետում, որ փետրվարի 21-ին թվագրված նամակը, որ հայկական կողմին է փոխանցվել մարտի 11-ին, պատասխանում ենք»:

2. «Հայաստանի Հանրապետությունը երբեք չի ունեցել և չունի տարածքային պահանջներ Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ: Ավելին, այստեղ ասվում է, որ Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը և սահմանների 1991թ. դեկտեմբերի 8-ին Ադրբեջանի Հանրապետության հետ համատեղ ստորագրելով ԱՊՀ ստեղծելու մասին համաձայնագիրը Հայաստանի Հանրապետությունը տվյալ համաձայնագիրը վավերացրել է 1992թ. փետրվարի 18-ին: Այսինքն՝ այդ ժամանակ, որ ստորագրվել է, մենք փոխադարձաբար ճանաչել ենք, իրար նկատմամբ, միանալով տվյալ կառույցին»:

3. «Հայկական կողմի համար հիմնարար են Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգության երաշխավորման, նրանց իրավունքների և ազատությունների հարգման, ինչպես նաև ԼՂ վերջնական կարգավիճակի որոշման հարցերը: (Կարգավիճակի հարցը բարձրացրե՞լ է հայկական կողմը, թե՞ չի բարձրացրել)»:

4. «Հայկական կողմը կարևոր է համարում Ադրբեջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ռուսաստանի Դաշնության նախագահի նոյեմբերի 9-ի, հունվարի 11-ի և նոյեմբերի 26-ի հայտարարություններում ամրագրված պարտավորվածությունները: (Իսկ դա ո՞րն է. գերիների վերադա՞րձը, որը մինչ օրս չի արվել, կոմունիկացիաների բացո՞ւմը, որ Ադրբեջանն է ձգձգում)»:

[3] ԱԳՆ-ն չի տրամադրում Բաքվին Երևանի 6 կետանոց պատասխանը՝ հղում անելով Էդմոն Մարուքյանի հարցազրույցին, 17.05.2022, https://hetq.am/hy/article/144622 (Այցելվել է 17.05.2022թ.):

5. «Հայկական կողմը պատրաստ է սկսել բանակցությունները խաղաղության, հարաբերությունների կարգավորման պայմանագիր կնքելու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև միջպետական հարաբերությունների հաստատման համար՝ ՄԱԿ-ի կանոնադրության, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի և Հելսինկյան եզրափակիչ ակտի հիման վրա: (Սրանք այն հիմնարար սկզբունքներն են, որոնք ի սկզբանե եղել են, այսինքն՝ այստեղ է, որ ամրագրված է ազգերի ինքնորոշման իրավունքը)»:

6. «Համապատասխան բանակցությունների կազմակերպման համար հայկական կողմը դիմել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին»:[4]

Փորձենք հասկանալ, թե ինչ են իրենցից ներկայացնում Մարուքյանի հրապարակած 6 կետերը.

- Նախ, չնայած Մարուքյանի կամայական մեկնաբանություններին, անհասկանալի է, թե ինչպես կարելի 1-ին կետը համարել առանձին առաջարկ, առավել ևս սկզբունք: Սա զուտ դիվանագիտական գրագրության տարր է, որը որևէ բովանդակային նշանակություն չունի:
- Հայկական պաշտոնական պատասխանի 2-րդ կետում առկա է կոպիտ դիվանագիտական անգրագիտություն. այնտեղ նախ չի նշվում, որ միջազգային կազմակերպության անդամակցությունը էականորեն տարբերվում է երկկողմ համաձայնագրերից (օրինակ՝ ՌԴ-ն և Ճապոնիան ՄԱԿ-ի անդամներ են, բայց ունեն տարածքային հակամարտություն Կուրիլյան կղզիների շուրջ, հետևաբար Ճապոնիան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մինչ օրս ՌԴ հետ խաղաղության համաձայնագիր չի ստորագրել, տարածքային խնդիրներ ունեն ԱՊՀ անդամներ Տաջիկստանն ու Ղրղզստանը, ՆԱՏՕ-ի անդամներ Հունաստանն ու Թուրքիան և այլն): Խեղաթյուրված ձևով է ներկայացվում ԱՊՀ-ին Հայաստանի և Ադրբեջանի անդամակցության գործընթացը, կարծես դա տեղի է ունեցել միաժամանակ, կոնկրետ փաստաթղթի ստորագրմամբ և միմյանց տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչմամբ, մինչդեռ իրականությունն այլ է. ԱՊՀ ստեղծման համաձայնագիրը 1991թ. դեկտեմբերի 8-ին ստորագրել են Ուկրաինան, Բելառուսն ու Ռուսաստանը[5], ԱՊՀ-ին միանալու

[4] Հարցազրույց Էդմոն Մարուքյանի հետ, Հանրային Հեռուստաընկերություն, 13.05.2022թ, https://www.youtube.com/watch?v=2JNCQDBHlnk&ab_channel=%D4%BC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80 (Այցելվել է 17.05.2022թ.):

[5] Համաձայնագիր Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, 18.02.1992թ.,

որոշումը Հայաստանն ու Ադրբեջանը կայացրել էին ավելի ուշ՝ Ալմաթիի հռչակագրի ստորագրմամբ[6], իսկ Հայաստանը, ԱՊՀ ստեղծման պայմանագիրը վավերացնելով, դրան պաշտոնապես միացել է 1992թ. փետրվարին, Ադրբեջանը՝ 1993թ. սեպտեմբերին: Բացի այդ, ոչ միայն անտեսվում է ԱՊՀ ստեղծման համաձայնագրում, ինչպես նաև ԱՊՀ կանոնադրության մեջ[7] ինքնորոշման իրավունքի սկզբունքի առկայության փաստը՝ ընդգծելով միայն տարածքային ամբողջականության սկզբունքը, այլև չեն հիշատակվում ԱՊՀ համաձայնագրի վավերացման ժամանակ ՀՀ Գերագույն խորհրդի վերապահումները[8]: Այդ վերապահումները կապված էին ժողովուրդների ինքնորոշման անքակտելի իրավունքի խնդիրը ավելի ընդգծելու և հստակեցնելու հետ, և փաստացիորեն այդ համաձայնագիրը ՀՀ համար ուժի մեջ էր մտել այդ վերապահումներով:

- 3-րդ կետում առկա են ընդհանուր ձևակերպումներ, ԼՂ հայության անվտանգության երաշխիքների, իրավունքների, ազատությունների և կարգավիճակի մասին: Ինչպես տեսնում ենք, շատ կոնկրետ և հստակ ազգերի ինքնորոշման իրավունքի և ազատ կամարտահայտման միջոցով կարգավիճակի հստակեցման փոխարեն օգտագործվում են շատ ընդհանրական ձևակերպումներ: Բազմիցս նշվել է, որ նման անորոշության պարագայում Ադրբեջանը կարող է այդ իրավունքները մեկնաբանել շատ տարբեր ձևերով՝ ընդհուպ կյանքի իրավունքից մինչև մշակութային ինքնավարություն, իսկ կարգավիճակը կարող է առավել կամայական մեկնաբանությունների արժանանալ, ընդ որում՝ Ադրբեջանի կազմում: Անվտանգության երաշխիքներն էլ, առանց հստակեցման, կարող են ենթադրել խաղաղապահ առաքելությունից մինչև Ադրբեջանի կողմից ինչ-ինչ բանավոր կամ գրավոր երաշխիքներ, որոնք

---

http://www.parliament.am/library/APH/1.pdf?fbclid=IwAR2G7han3o7UHtnBLA6S3WgS8VJ46KoKenv5BZ9OSlsx3Jb-noNHBbQ9ERo (Այցելվել է 17.05.2022թ.):

[6] Ալմաթիի հռչակագիր, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, 21.12.1991թ, http://www.parliament.am/library/APH/2.pdf?fbclid=IwAR3UzcNhviIWqFlM2uAicFNiW7nVmXf5jq1S_BlltzzBZ5VRhFSr-NtIB1g (Այցելվել է 17.05.2022թ.):

[7] СОГЛАШЕНИЕ о создании Содружества Независимых Государств, Электронный фонд актуальных правовых и нормативно-технических документов, 08 декабря 1991, https://docs.cntd.ru/document/1900745 (Այցելվել է 17.05.2022թ.):

[8] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ, որոշում 1991 թվականի դեկտեմբերի 8-ին Մինսկում Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Ֆեդերացիայի (ՌԽՖՍՀ) և Ուկրաինայի կողմից ստորագրված Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագրի վավերացման մասին, 18.02.1992, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3232&fbclid=IwAR1BKqN4yPLS4CJC3dovfp8q4Fin3nPtp0MBufmnnhSGJPK5pEW1eCLhUCA (Այցելվել է 17.05.2022թ.):

ցանկացած պահին կարող են առ ոչինչ դառնալ՝ հաշվի առնելով անցյալի փորձն ու ներկայիս պրակտիկան:

- 4-րդ կետում հղում է կատարվում նախկինում ստորագրված փաստաթղթերին և փորձ է արվում դա մեկնաբանել իբրև գերիների վերադարձի, հաղորդակցությունների բացման պահանջ: Նախ, անհասկանալի է, թե ինչպես կարելի է որպես սկզբունք դիտարկել արդեն ստորագրված հայտարարությունները: Հատկանշական է, որ Ադրբեջանը իր ներկայացրած 5 կետերում շատ կոնկրետ ձևակերպել է իր սկզբունքներն ու նախապայմանները, այդ թվում՝ տարածքային ամբողջականության և Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջների բացակայության վերաբերյալ, հետևաբար անհասկանալի է, թե ինչո՞ւ է հայկական կողմը զուտ հղում կատարում այս կամ այն հայտարարությանը և ոչ թե կոնկրետ առաջ քաշում իր սկզբունքները, ընդ որում՝ նույնիսկ գերիների հետ կապված հումանիտար բնույթի հարցում:
- 5-րդ կետում հղում է կատարվում միջազգային իրավունքի մի շարք հիմնարար փաստաթղթերի՝ մեկնաբանելով, թե այդպիսով հայկական կողմը բարձրացրել է նաև ազգերի ինքնորոշման սկզբունքը և հայկական կողմի շահերից բխող այլ սկզբունքներ: Կրկին, համեմատության համար, Ադրբեջանը կոնկրետ շեշտում է տարածքային ամբողջականության սկզբունքը, այլ ոչ թե ՄԱԿ-ի կանոնադրությունը կամ այլ ծավալուն փաստաթղթեր՝ հնարավորինս նեղացնելով իր առաջարկած սկզբունքների մեկնաբանման դաշտը: Ակնհայտ է, որ այսպիսով Ադրբեջանին խուսանավելու և այս կետերը կամայական մեկնաբանելու դիվանագիտական սողանցք է թողնվում:
- 6-րդ կետը առհասարակ հնարավոր չէ համարել սկզբունք կամ առաջարկ, որովհետև այն զուտ փաստի արձանագրում է, որը չի կարող համարվել որպես հետագա բանակցությունների հիմք: Ստացվում է, որ Ադրբեջանի ԱԳ նախարարի մեկնաբանությունն առ այն, որ հայկական կողմի ներկայացրածը նույնիսկ սկզբունքներ էլ չեն, հեռու չէ իրականությունից:

Մարուքյանն իր խոսքում մի քանի անգամ այս 6 կետերն անվանում է սկզբունքներ, այնուհետև նշում, որ «եթե մերը առաջարկներ չէ, ուրեմն իրենցն էլ առաջարկներ չէ, եթե իրենցը սկզբունքներ է, ուրեմն մերն էլ է սկզբունքներ»: Այնուհետև հավելում է, որ «Բրյուսելում իրենք համաձայնել են այդ փաստաթղթերով սկսել բանակցությունները, և երեկ տեղի ունեցավ առաջին հանդիպումը»:

Այս հայտարարությունը հիմնազուրկ է, որովհետև ո՛չ Ադրբեջանը, ո՛չ էլ միջնորդները չեն հաստատել, որ բանակցությունները սկսվելու են, այդ թվում՝ հայկական կողմի 6 կետերի հիման վրա, դրա մասին ոչինչ չի նշվում նաև Բրյուսելի

հանդիպումից հետո Շառլ Միշելի տարածած պաշտոնական հայտարարության մեջ[9]: Ավելին, ՀՀ արտգործնախարար Միրզոյանը վերջերս իր հարցազրույցներից մեկում հայտարարել է, որ մինչ այժմ Ադրբեջանի կողմից հայկական կողմի առաջարկած կետերի վերաբերյալ դրական արձագանք չի եղել[10]: Փոխարենը միջնորդ երկրները, մասնավորապես՝ ՌԴ ԱԳՆ խոսնակը, քանիցս արձանագրել են որպես բանակցությունների հիմք Ադրբեջանի կողմից ներկայացված 5 սկզբունքների և դրա վերաբերյալ հայկական կողմի դրական արձագանքի փաստը[11]:

Այսպիսով, նախ հայկական կողմը հապճեպ հայտարարելով, որ Ադրբեջանի ներկայացրած 5 կետերն իր համար ընդունելի են, առանց հաշվի առնելու սեփական առաջարկների վերաբերյալ Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշումը, ի սկզբանե թույլ է տվել կոպիտ դիվանագիտական սխալ՝ Ադրբեջանին հնարավորություն տալով բանակցային գործընթացը տանել բացառապես սեփական օրակարգով, հայկական առաջարկները մղելով երկրորդ պլան: Այնուհետև, ներկայացնելով խիստ անորոշ և դիվանագիտորեն ոչ պատշաճ ձևակերպված առաջարկներ, հայկական կողմը ավելի է հեշտացրել Ադրբեջանի գործը, այդ թվում՝ ավելի հիմնավոր դարձնելով վերջինիս դիրքորոշումը միջնորդների և միջազգային հանրության շրջանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվեց, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացրած «սկզբունքները» խիստ անհամարժեք են՝ ինչպես բովանդակության, այնպես էլ դրանց միջազգային ընկալման, արձագանքի տեսանկյունից: Մինչդեռ ի պատասխան Ադրբեջանի ներկայացրած 5 կետերի՝ Հայաստանը կարող էր առաջ քաշել ոչ պակաս

[9] Statement of European Council President Charles Michel following the Second Trilateral Meeting with President Ilham Aliyev and Prime Minister Nikol Pashinyan, 06.04.2022, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/04/06/statement-of-european-council-president-charles-michel-following-the-second-trilateral-meeting-with-president-ilham-aliyev-and-prime-minister-nikol-pashinyan/ (Այցելվել է 17.05.2022թ.):

[10] ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հայտարարությունը և պատասխանը լրագրողների հարցերին՝ Հայաստան-Եվրամիություն գործընկերության խորհրդի նիստին ընդառաջ, 18.05.2022, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2022/05/18/armenia_eu/11453 (Այցելվել է 19.05.2022թ.):

[11] Брифинг официального представителя МИД России М.В.Захаровой, О назначении спецпредставителя Министра иностранных дел России по содействию нормализации отношений между Азербайджаном и Арменией, Москва, 20 апреля 2022 года, https://www.mid.ru/ru/press_service/spokesman/briefings/1810165/ (Այցելվել է 17.05.2022թ.), Брифинг официального представителя МИД России М.В.Захаровой, О российской позиции по статусу т.н. нагорно-карабахской республики, Москва, 28 апреля 2022 года, https://www.mid.ru/ru/press_service/spokesman/briefings/1811231/ (Այցելվել է 17.05.2022թ.):

հիմնավոր, միջազգային իրավունքի տեսանկյունից անխոցելի և որոշակիության տեսանկյունից շատ հստակ սկզբունքներ՝ առկախելով Ադրբեջանի 5 սկզբունքների վերաբերյալ պաշտոնական դիրքորոշման հայտարարումը և հանդես գալով երկու կողմերի առաջ քաշած սկզբունքները մեկ ընդհանուր փաթեթով ընդունելու առաջարկով: Փորձենք ներկայացնել այն սկզբունքները, որոնք կարող էին ընկած լինել հայկական կողմի առաջարկների հիմքում.

- Կողմերը վերահաստատում են իրենց հավատարմությունը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, այդ թվում՝ ազգերի ինքնորոշման իրավունքի նկատմամբ:
- Կողմերը հրաժարվում են միմյանց նկատմամբ ուժի և դրա սպառնալիքի կիրառումից, այդ թվում՝ հաշվի առնելով ազգերի ինքնորոշման և ժողովուրդների իրահավահավասարության, սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքները:
- Որպես բանակցությունների մեկնարկ և վստահության մթնոլորտի ամրապնդում՝ կողմերը պատրաստակամություն են հայտնում լուծել երկու երկրների միջև առկա հումանիտար բնույթի բոլոր խնդիրները, մասնավորապես անհապաղ իրականացնել գերիների և այլ պահվող անձանց վերադարձի հետ կապված միջազգայնորեն ստանձնած բոլոր պարտավորությունները:
- Նախքան սահմանագծման և սահմանազատման գործընթացի ավարտը, կողմերը հրաժարվում են ուժային եղանակով սահմաններին առկա ստատուս քվոյի ցանկացած փոփոխությունից և վերադառնում են նախքան 2021թ. մայիսի 12-ը սահմաններին առկա ստատուս քվոյին:
- Կողմերը վերահաստատում են իրենց հավատարմությունը միջազգայնորեն ստանձնած բոլոր պարտավորությունների, այդ թվում՝ ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում նախկինում ստորագրված հիմնարար փաստաթղթերի՝ Մադրիդյան սկզբունքների, Մայնդորֆյան հռչակագրի, երկկողմ և բազմակողմ այլ հիմնարար փաստաթղթերի ու հայտարարությունների նկատմամբ:
- Կողմերը հրաժարվում են տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակման հարցում այնպիսի մեկնաբանություններից և հավակնություններից, որոնք կասկածի տակ կդնեն տվյալ ենթակառուցվածքի նկատմամբ դրա գտնվելու երկրի սուվերենությունը:

Սրանք միայն այն սակավաթիվ առաջարկներն են, որոնք հայկական կողմը կարող էր ներկայացնել որպես բանակցային գործընթացի մեկնարկի հիմք և որոնք կարող էն բավականին ընկալելի լինել միջազգային հանրության ու միջնորդների համար: Այս և այլ սկզբունքները հնարավոր է բարձրաձայնել նաև հետագայում,

քանի դեռ բանակցային գործընթացը լիարժեքորեն չի մեկնարկել և դրա հիմքում ընկած սկզբունքներն ամբողջությամբ չեն հստակեցվել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*